ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԵԼՔ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սիմոնյան.

Ի պատասխան Ձեր՝ 09.10.2017թ. հ.5/Ե- 06 գրության, տեղեկացնում ենք.

Մոսկովյան փողոցի հ.28 շենքի հ.165 հասցեում գտնվող տարածքին կից՝ «Անահիտ Մ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից նախաձեռնվել են գոյություն ունեցող ծածկոցի վերանորոգման և արդիականացման աշխատանքներ, այդ թվում՝ ապակեպատ ցուցափեղկերի տեղադրման, սակայն այդ աշխատանքները Երևանի քաղաքապետարանի կողմից կասեցվել են, իսկ տեղադրված ցուցափեղկերն ապամոնտաժվել: Վերոհիշյալ ծածկոցի հետագա շահագործման (օրինականացման կամ քանդման) առնչությամբ Երևանի քաղաքապետարանում 17.08.2017թ. հարուցվել է համապատասխան վարչական վարույթ, սակայն այն վերոնշյալ հասցեի տարածքի սեփականատիրոջ կողմից բողոքարկվել է ՀՀ վարչական դատարանում (վարչական գործ թիվ ՎԴ/8546/05/17), որն ընդունվել է համապատասխան վարույթ, ուստի՝ հիմք ընդունելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, հարուցված վարչական վարույթը համարվում է կասեցված, իսկ քննարկման առարկա հանդիսացող ծածկոցի հետագա տնօրինմանն առնչվող հարցին Երևանի քաղաքապետարանը կանդրադառնա հիշյալ դատական վարույթի հիման վրա ընդունված և օրինական ուժի մեջ մտած վարչական ակտի պահանջների շրջանակներում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ